ԿԵԱՆՔԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ
CELEBRATION OF LIFE
Acrylic on canvas, 1993
70 x 92cm.
*Artist's Collection, Glendale, California*



ՅԻՇԱՏԱԿ
MEMORY
Oil on canvas, 1976
100x 150cm.
*Private Collection, Tehran, Iran*





©1997 Alice Navasargian



# ՍԻՐԱՔ ՄԵԼՔՈՆԵԱՆ

1931

# SIRAK MELKONIAN

Կան արուեստագէտներ, որոնց ստեղծագործական ինքնութիւնը նկատելի է դառնում սկզբնական աշխատանքներից։ Այդպիսին է Սիրաքը։ Նրա ուշ շրջանի վերացական և առաջին շրջանի իրապաշտական գործերի մէջ կայ ընդհանրութիւն։ Սահուն, մեղեդային, իրար մի տեսակ ձայնակցող գծերը առաւել ընդհանրացած են ներկայացնում նկարչի վերացական բնոյթի պատկերներում։ Այստեղ մեղմօրէն իրար ագուցող գծերին ու ձևերին գումարւում են բաց ու մաքուր գոյները՝ կտաւներին հաղորդելով երաժշտական հնչողութիւն։

Սիրաքը ծնել է Թեհրանում։ Նախնական նկարչական գիտելիքները ձեռք է բերել Մ. Գրիգորեանի մօտ, ցուցադրուել է Թեհրանի «Էսթէտիկ» նկարասրահում։ Ունեցել է բազմաթիւ ցուցահանդէսներ։ Թեհրանի Բիէնալում (1988) արժանացել է առաջին մրցանակի։ Նա բնակութիւն է հաստատել Քանադայի Թորոնթօ քաղաքում։

There are artists whose talents become apparent at an early age. Sirak Melkonian is one of those artists. There is a similarity between his later abstract works and his earlier realistic works. Smooth, flowing lines, which are unique to the Iranian artists, are seen throughout the artist's work. The open and clean colors give his canvases a musical resonance.

Sirak was born in the village of Khordoun near Tehran. He received his early art education at M. Grigorian and was exhibited at the "Esthetic" gallery. He has had many other exhibits as well. He won the first prize at the 1988 Biennial held in Tehran. He now lives in Toronto, Canada.



ՊԱՏՈՒՀԱՆ #5

WINDOW #5
Oil on canvas, 60 x 40cm.
*Private Collection*



©1997 Alice Navasargian

ՊԱՏՈՒՀԱՆ #9

WINDOW #9

Oil on canvas, 70 x 60cm.

*Private Collection, Toronto, Canada*



ՊԱՏՈՒՀԱՆ #7

WINDOW #7

Oilc on canvas, 100 x 120cm.

*Private Collection, Toronto, Canada*





©1997 Alice Navasargian



ՊԱՏՈՒՀԱՆ #3

WINDOW #3
Oil on canvas, 120 x 80cm.
*Private Collection*



©1997 Alice Navasargian



ՊԱՏՈՒՀԱՆ #2

WINDOW #2

Oil on canvas, 110 x 100cm.

*Private Collection*



©1997 Alice Navasargian



# ՎԱՀԷ ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

1941

# VAHE BADMAKRIAN

Շարժուն, դինամիկ ձեւերն ու հնչեղ գոյները արտայայտիչ միասնութիւն են կազմում Վահէի գործերում: Նկարչի պատկեր ստեղծելու նախահիմքը հեռաւոր կարօտից ծնւած իրական տպաւորութիւններն են, լեռների, դաշտերի, ամպերի, շէնքերի անվերջ ձգւող ֆորմեր: Իբրև արդիւնք՝ կտաւի վրայ յայտնւում են ինչ-որ տիեզերական ծաւալներ, որոնք չունեն սկիզբ, չունեն վախճան, անընդհատ կերպարանափոխւում են, դառնալով իւրօրինակ արձագանքը արւեստագէտի կանչող կարօտների ու պայծառ տեսիլների:

Վահէն ծնւել է Թաւրիզում: Աւարտել է Քուշէշ-Դաւթեան դպրոցը: Մեկնել է Իտալիա, սովորել Ֆլորանսի համալսարանի ճարտարապետութեան բաժնում: Վերադառնալով Իրան, դասաւանդել է Թեհրանի համալսարանում, միաժամանակ զբաղւել նկարչութեամբ ու շէնքերի կառուցմամբ: 1980-ին բնակութիւն է հաստատել Լօզանում: Ցուցահանդէսներ է ունեցել Ժնևում (1983), Լօզանում (1984, 1985), Ֆրայբուրգում (1986), Լոնդոնում (1987), և Լոս Անջելըսում (1988):

Vahé's works are composed of lively, dynamic forms and resonant colors which form a cohesive unity. The basis of his paintings are the impressions of longing which has arisen from far away, the unending forms of mountains, fields, clouds, and buildings. Universal expanses are expressed on his canvases, that have neither beginning nor end, but are constantly changing, becoming a unique reflection of the artist's longing and bright vision.

Vahe was born in Tabriz. He graduated from Kushesh-Tavtian school. He left for Italy, and studied in the architecture university of Florence. Returning to Iran he taught at Tehran University, at the same time occupying himself with painting and architecture. In 1980 he settled in Lausanne. He has had shows in Geneva (1983), Lausanne (1984, 1985), Freiburg (1986), London (1987) and Los Angeles (1988).

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Oil on paper, 36 x 48cm.

*Private Collection, Lausanne, Switzerland*






©1997 Alice Navasargian



ԻՏԱԼԻԱ

ITALY

Color ink and feltpen on paper, 1983, 48 x 34cm.

*Private Collection, Lauzanne, Switzerland*



©1997 Alice Navasargian



ՍՊԻՏԱԿ

SPITAK
Gouache on paper, 48 x 36cm.
*Private Collection, Lausanne, Switzerland*



©1997 Alice Navasargian



ԳԼԽԱՊՏՈՅՏ

VERTIGO
Gouache and ink on paper, 48 x 36cm.
*Private Collection, Lausanne, Switzerland*



©1997 Alice Navasargian



# ՍԵԴՐԱԿ ՆԱԶԱՐԵԱՆ

1938

# SEDRAK NAZARIAN

Ս. Նազարեանը ծնւել է Իրանի Անգերտ քաղաքում: 13 տարեկան էր, երբ կայացաւ իր առաջին ցուցահանդէսը, որը որոշիչ դեր խաղաց նրա ապագայի համար: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանում, ապա, 1960-ին աւարտել տեղի գեղարւեստից ակադեմիան: Առաջին ցուցահանդէսը բերել է և առաջին յաջողութիւնը, արժանացել է մրցանակի:

Նազարեանի բնանկարների ու նատիւրմորտերի բնորոշ առանձնայատկութիւնը էքսպրեսիւ յուզականութիւնն է: Նկարիչը դրան հասնում է գունային կարծր, նիւթեղէն մակերեսի, մութ ու լուսաւոր հատւածների զգայաթրթիռ համադրումների միջոցով:

Sedrak Nazarian was born in the village of Angert in Iran. He has his first show at the age of 13, which played a decisive role in his future. He studied at the Mourad-Rafaelian school in Venice, then in 1960 he graduated from the local art academy. His first show brought also his first success, where he earned a medal. New shows followed in European cities and in Iran.

An expressive emotion is the characteristic of Nazarian's landscapes and still-lives. The artist achieved a rigid color, light and dark through a synthesis of elements.



ԲՆԱՆԿԱՐ

LANDSCAPE

Oil on canvas, 1966

60 x 90cm.

*Private Collection*

*Tehran, Iran*



©1997 Alice Navasargian



ՍԲ. ՂԱԶԱՐ ԿՂԶԻՆ, ՎԵՆԵՏԻԿ

ST. LAZAR ISLAND, VENICE
Oil on canvas, 1960, 30 x 55cm.
*Private Collection, Tehran, Iran*



ՃԱՄԲՈՐԴԸ

THE TRAVELLER
Oil on canvas, 1965, 50 x 60cm.
*Private Collection, Iran*



©1997 Alice Navasargian



# ԱՐՄԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

1933

# ARMEN GASPARIAN

Ստեղծագործական ներշնչման ակունքների մասին եթէ հարցնեն Գասպարեանին, երևի կը պատասխանէր՝ կեանքը, նրա անվերծանելի խորհուրդը: Գասպարեանին նկարչութիւնը խոհական է: Լի է մտորումներով, վաղանցուկ ժամանակի հանելուկի ըմբռնման ու բացայայտման ձգտումով: Նկարչի հայեացքը ուղղւած է երևոյթների խորքը, ուր համատարած վիշտ կայ ու տառապանք: Գասպարեանի տխրադալուկ գոյներով ու ներազդեցիկ գծերով մարմնաւորւած կտաւները, լինեն դրանք բնանկարներ թէ կենցաղային մոտիւներ, դիտողին բացում են հիմանիստ արւեստագէտի ներաշխարհը:

Գասպարեանը ծնւել է Աբադանում: Պատանութեան տարիներին եղել է Հնդկաստանում, սովորել է Քալքաթայում: 1962-ին եղել է Քալիֆորնիայում: 1963-ից սկսած՝ գրեթէ ամէն տարի ունեցել է ցուցահանդէսներ, յատկապէս Լագունա-Բիչի Դիանա-Նելսոն նկարասրահում, և արժանացել պարգևների: Գասպարեանը այժմ բնակւում է Փարիզում, Ֆրանսիա:

If one asks Armen Gasparian about the sources of his artistic inspiration, he would answer life, with its irreducible mystery. Gasparian's work is discrete, full of thought, with the desire to understand the riddle of life. The artist's gaze is fixed on the inner recesses of the objects, where there is a universal grief and anguish. With his sad colors, Gasparian and his canvases, whether landscapes or themes from life, open for the viewer the inner-world of a humanistic artist. He feels the pain of man from afar.

Gasparian was born in Abadan and spent his youth in India, where he studied in Calcutta. In 1962 he settled in California. Since 1963, he has held exhibits almost every year, especially in the Diana Nelson Gallery in Laguna Beach, California, where he has won awards. The artist presently lives and works in Paris, France.



ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԽԱՃԱՇ
ENGLISH BREAKFAST
Oil on canvas, 1986, 48 x 40cm.
*Private Collection, Paris, France*



©1997 Alice Navasargian



ԵՐԿՐԱՇԱՐԺ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
EARTHQUAKE IN ARMENIA
Oil on canvas, 1990, 145 x 155cm.



©1997 Alice Navasargian



# ՅԱՍՄԻԿ ՆԵՐՍԷՍԵԱՆ

1929

# HASMIK NERSESIAN

Նկարչուհու գործերը՝ միշտ նուրբ ու ճաշակով, ասես արձագանքում են նրա անուանը: Հարուստ է Յասմիկի նիւթապաշարը: Հեղինակել է նկարաշարժեր՝ նւիրուած եղեռնին, մայրութեանը, Քրիստոսին, վրձնել է նատիւր-մորտներ: Բայց ամէնից աւելի նա սիրում է պատկերել ծաղիկներ: Թւում է, թէ ծաղիկների այլազան ու մեղմանոյշ գոյները ներկապնակ են ծառայում նկարչուհուն նաև այլ բնոյթի գործերում: Լոյսի, կեանքի նրա խոր հաւատն է հաղորդւում դիտողին:

Ներսէսեանը ծնւել է Ռաշտում: Աւարտել է Իսֆահանի Անգլիական Քոլէջը: Մասնագիտական կրթութիւն է ստացել Գոնդոլա ակադեմիայում: Ունեցել է տասնեակ նկարահանդէսներ Թեհրանում և Քալիֆորնիայում:

The artists' works, always subtle like and with taste, reflect her name. Hasmik's themes are rich. She has painted series devoted to: the Genocide, motherhood, Christ, and she has painted still-lives. But most of all she loves to portray flowers. It seems as if the various and soft colors of the flowers are a palette for the artist in her other works as well. Her deep faith in light and life are communicated to the viewer.

She was born in Rasht and graduated from the English College in Isfahan. She received her specialized education from the Gondola Academy. She has had numeous shows in Tehran and California.




ԾԱՂԻԿՆԵՐ

FLOWERS

Acrylic, 1992, 33 x 28cm.

*Artist's Collection, Glendale , California*



©1997 Alice Navasargian




ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԸ

OUR ANCESTORS

Acrylic, 30 x 40cm.

*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# Ժ. ՆԱԹԱՇԱ ԿՈՍՏԱՆ

# J. NATASHA KOSTAN

Գծերի մեղմութիւնն ու երանգների նրբութիւնը, երգող դաշնութիւն են կազմում Նաթաշայի կտաւներում, միաժամանակ ի յայտ բերում դրանց անրջային, երազային բովանդակութիւնը: Նաթաշայի ստեղծագործական ոճը առարկայական ձեւերի ընդհանրացման, վերացարկման համոզիչ օրինակ է: Նրա պատկերներն ընկալւում են իբրեւ ճարտարապետական կառոյցների, պալատների, կամուրջների, սիւների միախառնուած տեսիլներ, ուր մանրամասերը սերտօրէն շաղկապուած են: Երբեմն կապտաւուն, երբեմն մոխրականաչ ընդհանուր մի գուներանգ այդ մանրամասերը միաձուլում է իրար, ստեղծելով քնարական յոյզեր խտացնող մի իւրօրինակ վարագոյր-դեկոր:

Natasha's canvases have a soft line, a subtlety of hues, and harmony, at the same time expressing their colorful content. Natasha's creative style is a persuasive example of the generalization and abstract nature of objective forms. Her paintings can be seen as architectural structures, palaces, bridges, columns, visions of interplay where details are intimately connected. The general hues are blue or gray-green, the parts are unified into one, creating a condensing of lyrical emotion and a unique decor.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Mixed media on paper, 45 x 60cm.

*Private Collection, Los Angeles, California*





©1997 Alice Navasargian

ՍԿԻԶԲ ԵՒ ՎԵՐՋ #7
ALPHA AND OMEGA #7
Mixed media on paper
55 x 75cm.
*Private Collection*
*Los Angeles, California*





ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
UNTITLED
Acrylic on canvas
12 x 17.5cm.
*Private Collection*
*Los Angeles, California*



©1997 Alice Navasargian



# ՌՈՒԲԷՆ ԱՄԻՐԵԱՆ

1937

# ROUBEN AMIRIAN

Ռ. Ամիրեանի կտաւներն օժտուած են բարձր մակարդակով, մի արժանիք, որ դրսևորւում է պատկերների գծային մտածուած կառուցուածքների և գունային մակերեսի հաւասարազօր հնչողութեան մէջ: Նա վերացապաշտ է: Սակայն, վերացական ձևերը երբեմն ասես սևեռումի են բերւում և կտաւներում յայտնւում են իրականութեան ճանաչելի դրուագներ: Իր ինքնատիպ դեղնականաչ, գեղեցիկ հնչող գունանկարի շնորհիւ նկարիչը զուգորդում է անիրականն ու իրականը, հասնելով մտերմիկ, մաքուր ու բարի զգացումների բացայայտման:

Ամիրեանը ծնւել է Թեհրանում: Աւարտել է տեղի համալսարանի կերպարւեստի դպրոցը: 1962-ին մեկնել է ԱՄՆ, ընդունւել Հարվարդի համալսարանի ճարտարապետութեան բաժին: 1973-ին ստացել է մագիստրոսի աստիճան: Անհատական ցուցահանդէսներ է ունեցել Վաշինգտոնում (1969, 70), Թեհրանում (1976):

Rouben Amirian's canvases are of a high artistic quality, which can be seen in the thoughtful line and construction of the paintings and in the equally strong color surfaces of his work. His work is abstract, but sometimes the abstract forms come into focus and one can see realistic events expressed. Thanks to his unique green-yellow palette, the artist can mix the real and the unreal, achieving a intimate, clean, and kind expression of feeling.

Amirian was born in Tehran and graduated from the local university with a degree in art. In 1962 he left for the United States and was accepted to the Architecture School of Harvard University. In 1973 he received an MA in architecture. He has had individual shows in Washington, D.C. (1969, 1970) and in Tehran (1976).



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Oil on canvas, 1993



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Oil on canvas, 1994



©1997 Alice Navasargian



# ՎԱՐՈՒԺ ԾԱՌՈՒԿԵԱՆ

1935

# VAROUJ DZAROUKIAN

Վ. Ծառուկեանը ծնուել է Թեհրանում, նախնական կրթութիւնն ստացել է Սան-Լուի քոլէջում։ 1954-ին մեկնել է ԱՄՆ, սովորել USC-ի ճարտարապետութեան ու կերպարուեստի դպրոցում։ Այնուհետեւ աւարտել է Քալիֆորնիայի համալսարանի ճարտարապետութեան բաժինը։ Ծաւալել է կառուցողական եռանդուն գործունէութիւն, հանդէս եկել նաեւ յօդուածներով և ընտրուել մի շարք ընկերութիւնների, այդ թւում՝ ամերիկեան ճարտարապետների հիմնարկի անդամ։

Ծառուկեանի նկարչական գործերը, հիմնականում ջրաներկով և իւղաներկով արուած նատիւրմորտեր, յատկանշւում են դեկորատիւ բնոյթով։ Առինքնող են իրենց տպաւորիչ կառուցւածքով ու գոյների խորհրդաւոր, գեղեցիկ հնչողութեամբ։

Varouj Dzaroukian was born in Tehran and received his primary education in the San Louis College. In 1954 he left for the United States where he studied architecture and portraiture. He graduated from the University of California with a degree in architecture. He enthusiastically created a body of work and also became known through his articles. He was chosen as a member of a number of organizations and became a member of the American Institute of architects.

Dzaroukian's primary artistic works are his water-color and oil still-lives, which are characterized by their decorative nature. They are lyrical in their impressive structure and the mysterious resonant quality of the colors.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
UNTITLED
Watercolor



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
UNTITLED
Watercolor





©1997 Alice Navasargian



# ՀԵՐՄԱՆ ՎԱՀՐԱՄԵԱՆ

1940

# HERMAN VAHRAMIAN

Հերման Վահրամեանը ծնուել է Թեհրանում։ Հոն ուսանելիս՝ աշխատել է նաև իր յաճախած դպրոցում, գեղարուեստի և լրագրութեան մարզում։ 1958-ին վկայուելուց յետոյ, նա իր ուսումը շարունակել է Իտալիայում, մասնագիտանալով ճարտարապետութեան մէջ և վկայուելով բարձր գնահատականով։

Վահրամեանը արուեստի ռահվիրայ է։ Նա նկարիչ է և քանդակագործ, մասնագիտացել Միջին Արևելքի արուեստում և մշակոյթում։ Նա հեղինակն է բազմաթիւ յօդուածների, հիմնադիրը՝ ԻՔՕՄ-ի, (ոչ-տիրող մշակոյթների հետազօտական հիմնարկ, Միլանում, 1978), ՄԻՒԶԻՔԱՄ հիմնարկի (1981), և ՕԷՄՄ Հրատարակչութիւնների, այս վերջինը Յակոբիկ Մանուկեանի հետ (Միլանում, 1985-ին, այժմ՝ Վենետիկում)։ Նա Լրագրողների Լոմբարդեան Ուխտի անդամ է։ Այժմ ապրում ու գործում է Միլանում, Իտալիա։

Herman Vahramian was born in Tehran. While studying towards his degree, he worked in industrial design and journalism at the school in Tehran where he got his diploma in 1958. He then continued his education in Italy, studying architecture and graduating cum-laude from the Politechnicum in Milan.

Vahramian is a pioneer in art. Being both a painter and a sculturer, he specialazes in Middle Eastern art and culture. He is also the author of numerous papers and is the founder of ICOM - Research Institute of non-dominant cultures (Milan, 1978), MUSICAM Institute (Monaco of Baviera, 1981) and OEMME Editions, with Agopik Manoukian (Milan, 1985, today in Venice). He is a member of the Journalism Order of Lombardian. Presently he lives and works in Milan, Italy.



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ #1111

UNTITLED #1111

Sculpture, 1992, 38 x 31 x 54cm.

*Private Collection, Milano, Italy*



©1997 Alice Navasargian



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

China ink, watercolor, tempera on paper, 1987, 36.5 x 25.5cm.

*Private Collection, Munich, Germany*



©1997 Alice Navasargian



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ #395
UNTITLED #395
Sculpture

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ #1125
UNTITLED #1125
Sculpture





©1997 Alice Navasargian



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
UNTITLED
China ink, watercolor, tempera on paper, 1986, 36.5 x 25.5cm.
*Private Collection, Munich, Germany*



©1997 Alice Navasargian



# ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

1946

# SIMON SIMONIAN

Սիմոնեանը նկարել սկսել է փոքրուց։ 1978-ին տեղափոխուել է Միացեալ Նահանգներ և աւելի է զարգացրել իր արուեստը, ուսանելով Քենտի և Արուեստի Կենտրոն համալսարաններում և Քալիֆորնիայի Գեղարուեստի քոլէջում։ Նա վկայուել է կերպարուեստի և ճարտարապետութեան մարզերում։

Սիմոնեանը ցուցադրուել է Թեհրանի Ամերիկեան Ընկերակցութեան սրահներում, Լոս Անջելըսի Ժամանակակից Արուեստի, Բ.Ֆ.Գ.-ի, և Ռիքօ պատկերասրահներում, այս վերջինի՝ Միջազգային ցուցահանդէսում։ Արժանացել է նաև մի շարք մրցանակների։

Իր գոյներով հարուստ կտաւները յիշեցնում են նրա հիացմունքի առարկայ Քանտինսքիին և Փիքասոյին։

Simonian began painting early in his childhood. In 1978, he moved to the United States of America and developed his art further, by studying at the University of Kent, the Art Center University and the College of Design in California. He has obtained degrees both in figurative art and architecture.

Simonian has exhibited at the exhibition halls of the American Society in Tehran, the Los Angeles Contemporary Art Gallery, B.F.C. Gallery, and the International Exhibit in Rico Gallery, Los Angeles. He has earned several prizes.

Simonian's rich, colorful pictures are reminiscent of Kandinsky and Picasso, two masters he admires.



ԱԼԵԿՈԾՈՒՄ - AGITATION
Oil on cardboard, 1990, 92 x 122cm.
*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



ԴԱՇՆԱԿԱՀԱՐԸ

THE PIANO PLAYER

Oil on cardboard, 1'

*Artist's Collection, Glendale, California*

©1997 Alice Navas

ԱՄԱՌՒԱՅ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՐ

SUMMER-NIGHT DANCE

Oil on cardboard, 1993, 44 x 36cm.





©1997 Alice Navasargian



# ՀՐԱՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

1942

# HRACH KARAPETIAN

Իրանական մանրանկարչութեանը յատուկ՝ սահուն, երգող գծերի ու առինքնող գոյների աւանդոյթներն ուրոյն դրսեւորում են գտել Հ. Կարապետեանի արուեստում, որը դիտողին է ներկայանում իբրեւ ոճաւորման արդիական մի տեսակ։ Հակառակ իր պատկերներում առկայ գերիրապաշտական արուեստի որոշ տարրերի, նկարիչը միշտ հաւատարիմ է զարդային գեղեցկութեան հանդէպ իր պաշտամունքին։

1974 թուականից, գրեթէ ամէն տարի, Կարապետեանն անհատական ցուցահանդէսներ է ունենում Թեհրանում։ 1980-ին նկարիչը հանգրուանել է ԱՄՆ-ում և շարունակել յաջողութեամբ հանդէս գալ Դիթրոյթում, Լոս-Անջելըսում, Լոնդոնում, ինչպէս նաև Իրանի տարբեր քաղաքներում։

The unique style of Iranian miniature painting found a flowing, lyrical, and colorful tradition in the original work of Hrach Karapetian. His work appears to the viewer as a modern style. Contrary to the realistic depiction of the objects in his painting, the artist has always remained true to his worship of decorative beauty.

Since 1974, Karapetian has held exhibitions almost every year in Tehran. In 1980 the artist settled in the United States and continued his successful work in Detroit, Los Angeles, London, and in various cities of Iran.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆ, 1 և 2

UNIVERSAL ETERNITY 1 and 2, Watercolor, 1992, 98 x 67cm.
*Hamlet Chraghchian Collection, Glendale, California*







©1997 Alice Navasargian



ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ

HARMONY

Watercolor on paper, 1993, 130 x 90cm.

*A.V. Pezeshkian Collection, Glendale, California*



# ՕՆԻԿ
# (Յովհաննէս Սահակեան)

1935

# ONIK
# (Hovhannes Sahakian)

Նկարչութիւնը, պարն ու երաժշտութիւնը վաղ հասակից Օնիկի տարերքն են եղել։ Ծնուել է Թեհրանում, եօթ տարեկանին յաճախել է Ժ. Աւետիսեանի պարարուեստի դպրոցը, իսկ 1952-ին պետութեան միջոցներով գործուղել Մոսկուա, վարպետացել Մեծ թատրոնի պալէի ստուդիոյում։ 1956-ին հաստատուել է ԱՄՆ-ում, իբրև մենապարող հանդէս է եկել տարբեր քաղաքներում, նկարահանուել ֆիլմերում։

Նկարչական կրթութիւն ձեռք է բերել Հոնարեստանէ Զիբայէ Քեշւար դպրոցում և Լոս-Անջելըսի Շինարդ և արուեստի ինստիտուտում։ 1956-ին կայացած ծանօթութիւնը Սալւադոր Դալիի հետ վերածուել է շուրջ քսան տարուայ բարեկամութեան։ Օնիկի՝ իւրօրինակ վարպետութեան դրոշմ կրող սիւրրէալիստական գործերում ձևախեղումներ, ներքին խռովքներ չկան։ Խաղաղ ու ջինջ տարածութեան մէջ բնութիւնն ու մարդիկ դիտողին են յայտնւում դասական շքեղ գեղեցկութեամբ, իբրև հէքիաթային տեսիլք։

ԱՄՆ-ում, Իրանում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Ֆրանսիայում՝ Օնիկի ցուցահանդէսները գտել են ջերմ արձագանք։ Այժմ նկարիչն ապրում ու գործում է Լիզպոնում։

The main elements of Onik's life from a young age were painting, dance, and music. He was born in Tehran and from the age of seven onwards he attended the Zh. Avetisian dance and art school and in 1952 he was sent to Moscow to study and to become a master at the studio of the great theater. In 1956 he settled in the United States, worked as a dance soloist in a variety of cities, and was filmed.

He studied art at the Honorestan Zipah Peshvar school and at the Shinart and art institutes of Los Angeles. A meeting with Salvador Dali in 1958 led to a close friendship of more than twenty years. There are no inner conflicts in the surrealistic masterpieces of Onik. Nature and man, in a peaceful and pure setting, appear to the viewer in a classic magnificent beauty as a vision of a fairy tale.

Onik's exhibitions have been warmly received in the United States, Spain, Portugal, and France. Currently the artist lives and works in Lisbon, Portugal.



ԱՍՏՒԱԾԱԾԻՆ
MADDONNA



©1997 Alice Navasargian



ՍԱԼՈՄԷԻ ՊԱՐԸ

SALOME'S DANCE

Mixed media, 1990

*Edward Fortunato Collection, Lisbon, Portugal*



©1997 Alice Navasargian



ՄԻ ԼՈՒՌ ՕՐ

ONE SILENT DAY
Mixed media, 1993, 45.5 x 60cm.
*Private Collection, Lisbon, Portugal*



©1997 Alice Navasargian



ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄ

DISCOVERY

Mixed media, 1991, 45.5 x 60cm.

*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

1942

# SONIA BALASANIAN

Նախքան Ֆիլադելֆիայի գեղարուեստի ակադեմիան աւարտելը (1970) Ս. Պալասանեանն արդէն եղել է մի շարք ցուցահանդէսների մրցանակակիր։ Նկարչուհու տարերքը արդիական արուեստն է։

1993-ին, ԱՄՆ-ի Արդի Արուեստի Արևելեան Կենտրոնում, Պալասանեանը ներկայացնում է կոնսեպտուալիստական՝ «Իմ Քոյրերի Ստուերները» սքանչելի գործը։ Չաղրաւոր կանանց՝ ինչ որ ալեկոծութիւն յիշեցնող պատկերումը դիտողին միանգամից համակում է խորհրդաւոր, մի տեսակ անմեկնելի լռութեան զգացումով։ Սիմբոլիկ մտածողութիւն ու տեսողութիւն, նաւզ միջոցներով ներգործող արտայայտչութեան հասնելու նուրբ հմտութիւն. գեղարուեստական այս արժանիքներով են պայմանաւորուած Պալասանեանի գործերի ինքնութիւնն ու դրանց ուղեկցող յաջողութիւնը։

Even prior to graduating from the Philadelphia Art Academy in 1970, Sonia Balasanian had already won prizes in a series of exhibitions. Modern art is the main element in her work.

In 1993, in the modern Oriental Art Center of the United States, Balasanian exhibited the wonderful work "The Shadows of My Sisters" in a conceptualist style. The depiction which reminds one of the unique temperament of women, affects the viewer at once in a mysterious way with a feeling of inseparable silence.

In a symbolic thought and vision, with the subtle mastery of inner expression, Balasanian's works are conditioned by these artistic values, with their original success.



ԻՄ ՔՈՅՐԵՐԸ

MY SISTERS, Detail



©1997 Alice Navasargian



ԻՄ ՔՈՅՐԵՐԸ

MY SISTERS

Installation, 6 x 3 x 2f.



©1997 Alice Navasargian



# ՏՐԴԱՏ ԱՂԱՄԱԼԵԱՆ

1945

# TRDAT AGHAMALIAN

Տ. Աղամալեանը ծնուել է Համադանում: Մասնագիտացել է որմնանկարչութեան և ապակու վրայ նկարելու (վիտրաժ) արուեստի մէջ: Որպէս ձևաւորող նկարիչ՝ չորս տարի աշխատել է Թեհրանի ամերիկեան դեսպանատանը: Աղամալեանի նշանակալից գործերից են Շափուրի հայոց եկեղեցու գմբէթի և Թեհրանի Սբ. Սարգիս եկեղեցու տասնչորս պատուհանների վիտրաժները (1973-75):

1979-ին Աղամալեանը մեկնել է ԱՄՆ: Բարձր են գնահատել նրա Լոս-Անջելըսի պատմական շինութիւններից մէկի նկարազարդումները: Այժմ լայն հռչակ ունի իբրև կինոնկարիչ: Նրա նկարչական գործերը բացայայտում են նրա վարպետութիւնն ու արուեստի յուզական բնոյթը:

Trdat Aghamalian was born in Hamadan. He has specialized in murals and painting on glass (vitrage). As an artist he worked for four years in the American Embassy in Tehran. Aghamalian's most outstanding works are the dome of the Armenian Church of Shapour and the decoration (vitrage) of the fourteen windows of the St. Sargis Armenian Church of Tehran (1973-1975).

In 1979 Aghamalian departed for the United States. His decorative work on a historic building in Los Angeles has gained attention. He has now gained a wide reputation as a cinematographer. His paintings are manifestations of his mastery and the emotional nature of his work.

ՅԻՍՈՒՍ - JESUS

Watercolor on paper, 1990, 56 x 41cm.
*Private Collection, Glendale, California*



ԿՆՈՋ ԴԻՄԱՆԿԱՐ - PORTRAIT OF A WOMAN

Watercolor on paper, 1991, 72 x 51cm.
*Private Collection, Glendale, California*





©1997 Alice Navasargian



ԵՐԿՄԻՏ ՄԱՅՐԸ

THE WORRIED MOTHER
Charcoal on paper, 56 x 46cm.
*Artist's Collection*



©1997 Alice Navasargian



## ԶԱՐԵՀ ԲԱՂՈՒՄԵԱՆ

## 1954

## ZAREH BAGHOOMIAN

Զարեհ Բաղումեանը ծնել է Աբադանում: Ուսանել է Թեհրանի Քամալ-էլ-Մոլք արուեստի դպրոցում, աւարտել 1973-ին: Նոյն տարին, նա տեղափոխուել է Իտալիա: Իր ուսումը կատարելագործել է Միլանոյի Բրերա Գեղարուեստի ակադեմիայում, որն աւարտել է 1978-ին: Մի տարի անց՝ նա վկայուել է Միլանոյի Գեղարուեստի Եւրոպական Հիմնարկը՝ ծանուցողական արուեստի բաժնից: Այդ օրից արժանացել է բազմաթիւ վկայագրերի և մրցանակների, մասնակցելով ձևաւորման արուեստի զանազան մրցանքների և տօնահանդէսների:

Բաղումեանը ունեցել է մի շարք ցուցահանդէսներ Իտալիայում և Սպանիայում: Այժմ ապրում և գործում է Միլանոյում:

Zareh Baghoomian was born in Abadan. He has studied art at the Kamal-el-Molk Art School in Tehran, graduating in 1973. That same year, he moved to Italy and settled in Milano. He continued his studies at the Fine Arts Acadeny of Brera in Milan and graduated in 1978. A year later, he received his diploma in Art Direction and Advertising at the Instituto Europeo Di Design of Milan. Since then, he has won numerous certficates and awards in advertising competitions and festivals.

He has had exhibitions in Italy and Spain. Presently, he lives and works in Milan, Italy.



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Mixed media on canvas, 1991

200 x 40cm.

*Private Collection, Milano, Italy*



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED

Mixed media on canvas

1991, 200 x 90cm.

*Private Collection, Milano, Italy*



©1997 Alice Navasargian



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED
Mixed media on canvas, 1991
200 x 65cm.
*Private Collection, Milano, Italy*



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED
Mixed media on canvas, 1991
200 x 10cm.
*Private Collection, Milano, Italy*



©1997 Alice Navasargian



# ՆԱՐՊԷ ՆԱԶԱՐԵԱՆ

1956

# NARBE NAZARIAN

Առաջին տպաւորութեամբ՝ Նարպէի աշխատանքները կարծես բարձրաքանդակներ են։ Իր կտաւների համար նա օգտագործում է լրացուցիչ նիւթեր, փակցնում իրար, ստեղծելով լոյս ու ստուերի տպաւորիչ խաղեր։ Շերտաւոր, թանձր մակերեսները խիստ արտայայտիչ են, ներգործող։

Նարպէն ծնուել է Թեհրանում։ Սովորել է տեղի համալսարանում, ուր և 1972-ին ցուցադրել է առաջին անգամ։ Սկզբնական շրջանում ներշնչուել է հօր՝ նկարիչ Գարեգինի գործերով։ 1976-ին գաղթել է ԱՄՆ, շարունակել ուսումը Քալիֆորնիոյ Նորդրիջ համալսարանում։ Աշակերտել է Եուրի Մարչէնկոյի։ 1980-ից սկսել է ցուցադրել իր աշխատանքները։ Այժմ ներգրաւել է ֆիլմերի և թատերական ձևաւորումների բնագաւառը, որը իր կնիքն է դրել նկարչի ձևամտածողութեան վրայ։

At first glance, it appears that Narbe's works are sculptures. In his paintings he utilized complementary materials, attached them to each other, creating an impressive interplay of light and darkness. The piecemeal and dense surfaces are extremely expressive and effective.

Narbe was born in Tehran. He studied at the local university where in 1972 he exhibited his work for the first time. In his early period of art he was influenced by his father, the painter Garegin's works. In 1976 he emigrated to the United States, and continued his education at California State University, Northridge. He was a student of Yuri Marchenko. He began to exhibit his works in 1980. Lately, he does set designs for movies and plays, which have put a considerable influence on his artistic thinking.

ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ 1
PERPETUATION 1
56.5 x 56.5cm.
*Artist's Collection, Glendale, California*



ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ 2
PERPETUATION 2
56.5 x 56.5cm.
*Artist's Collection, Glendale, California*





©1997 Alice Navasargian



# ԱԼԷՔ ԶԱՐԻՖԵԱՆ

1958

# ALEK ZARIFIAN

Նկարչի զուսպ, կառուցողական բնոյթ կրող նկարներում անմիջապէս կարելի է ճանաչել ճարտարապետին: Նրա կտաւները իրենց գունային ողորկ ու հարթ մակերեսներով դիտողի մտքերն առաջնորդում են դէպի արդիական արուեստ, մղում ճաշակի նոր ըմբռնումների ոլորտ:

Թեհրանում ծնւած Զարիֆեանը նախ սովորել է տեղի համալսարանի ճարտարապետական բաժնում: 1978-ին մեկնել է ԱՄՆ, ուսանել Փասատինայի քոլէջի գեղարուեստի բաժնում, իսկ 1984-ին աւարտել Քալիֆորնիայի համալսարանի ճարտարապետութեան ճիւղը: Նրա գեղարուեստական զարգացումն ընթացել է մօրեղբօր՝ յայտնի ճարտարապետ ու նկարիչ Ռոստոմ Ոսկանեանի ձեռքի տակ: Քաղաքաշինութեան մէջ խորացած Զարիֆեանը յաճախ հանդէս է գալիս նաև նկարչական գործերի ցուցահանդէսներով:

In the artist's restrained and organized canvases, one can immediately recognize the architect. With the smooth, colorful and polished surfaces of the artist's work, the viewer is drawn to modern forms, towards a new understanding of style.

The Tehran-born Zarifian studied initially at the local university and majored in architecture. In 1978 he left for the United States, and studied in the Art Department of Pasadena College. In 1984 he graduated from the University of California School of Architecture. His development as an artist took place under the supervision of his uncle, the famous architect and painter R. Vosganian. Zarifian, who is an expert architect, often shows his artistic works in exhibitions.

ՅՆՑՈՒՄ
AFTERSHOCK
Acrylic on paper, 1988, 67 x 67cm.
*Artist's Collection, Glendale, California*



ԳՈՅՈՒԹԻՒՆ
EXISTENCE
Acrylic and ink on canvas, 62 x 92cm.
*M. Avzoostanian Collection, Glendale, California*





©1997 Alice Navasargian



# ԱԼԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

## 1956

## ALICE STEPANIAN

Մենակութիւնը ակամայ մղում է մարդուն շրջապատի ոչ սովորական ընկալման: Իրանից ԱՄՆ գալուց յետոյ՝ Ստեփանեանը որոշ ժամանակ ապրել է մեկուսի կեանքով: Երեւոյթների, նոյնիսկ պարզ առարկաների մէջ նա տեսել, շօշափել է իր ապրումների ու մտածումների անդրադարձը, «զրուցել» դրանց հետ: Աթոռներն, օրինակ, նրա թուացել են շնչաւոր առարկաներ: Հետագայում, երբ փարատուել է մենութիւնը, «աթոռներն» սկսել են մի տեսակ վերանալ, համբառնալ...

Ստեփանեանի նկարչութեանը յատուկ է սիմբոլիկ մտածողութիւնը: Ընդհանուր դարչնագոյն գունանկարի մէջ թափանցած լապտերային լուսաւորութիւնը նրա պատկեր-ներն օժտում է տարօրինակ մթնոլորտով:

Isolation unwillingly pushes one towards an unusual understanding of one'ssurroundings. After arriving in the United States, Alice Stepanian lived alone for some time. She saw the impact of her thoughts and feelings even in the simplest objects, and "conversed" with them. Chairs, for example, seemed as living objects. Later, when her isolation disappeared, the "chairs" also began to disappear.

Stepanian's art is specific to a symbolic way of thinking. In her generally colorful paintings a penetrating light gives them an attractive, unusual quality.



ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՅՐ

BIOLOGICAL PLACE

Collage on canvas, 1993, 31 x 38.5cm.

*Dr. Max F. Schultz Collection*

*California*



©1997 Alice Navasargian



ՄԻ ՕՐ ԻՄ
ԱՐՔԱՅԱԶՈՒՆԸ
ԿԸ ԳԱՅ

SOME DAY MY PRICE
WILL COME
Mixed media
Collage on canvas, 1991
64 x 90cm.
*M.M. Stepanian Collection*



ՅՈՒՍՈՅ ՈՒՂԻՆ

PATH OF HOPE
Mixed Media,
Collage on canvas, 1992
*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# ՖՐԵԴ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1960

# FRED STEPANIAN

Արուեստագէտ ծնողներն իրենց միակ զաւակին երաժիշտ դարձնելու փափաքն իրականացրել են։ Սակայն, Ֆրեդը, որ ծնուել է Իրանում, ապա տաս տարեկանին տեղափոխուել ԱՄՆ, ի վերջոյ իր կոչումը գտնում է գոյների ու գծերի աշխարհում։

Նրա խիստ արդիաշունչ գործերն առաջին հայեացքից դիտողի միտքը տանում են դէպի դասական արուեստ, ընդ որում Ստեփանեանը նկարչականը ներհիւսել է քանդակայինի հետ։ Բնոյթով դեկորատիւ՝ նրա պատկերներն ամբողջանում են մետաղի հնչողութեան հասցւած գունային հարթ մակերեսներով։ Իրանց վրայով ասես մեղեդու նման հեզաձկում սահող ոսկեգոյն ակոսները, ներդաշնակւելով զընգուն գոյներին, ստեղծում են իսկական երաժշտա-քնարական տրամադրութիւն։

Ստեփանեանի նկարներն ու քանդակները մեծ յաջողութիւն են արձանագրել տարբեր ցուցահանդէսներում, ընկալւելով իբրև «գեղեցիկ ձօներգներ»։

Fred Stepanian was the only child of artistic parents, who attained their wish when he became a musician. Stepanian was born in Iran, spent his childhood in Armenia, and moved to the United States at the age of 10, where he finally found his calling in the world of color and line.

Looking at his intensely modern work, one is immediately drawn towards classical art, which Stepanian mixed with sculpture. Being decorative by nature, his painting is complete with flat surfaces reminiscent of metal. On those surfaces, the golden-color furrows create a musical-lyrical mood.

Stepanian's paintings and sculptures have achieved great success at many exhibitions, being seen as "Paens of Beauty."

ԿԵԱՆՔԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ - HARMONY IN LIFE
Acrylic on canvas, 1992, 92 x 92cm.
*Artist's Collection, Irvine, California*



ԱՆԹԱՒԷՍ - ANTAVES
Acrylic on paper, 1995, 56.5 x 36.5cm.
*Artist's Collection, Irvine, California*





©1997 Alice Navasargian



ՍԻՐՈՅ ԳՈՅՆԵՐ - COLORS OF LOVE
Acrylic on paper, 1993, 38.5 x 58.5cm.
*Artist's Collection, Irvine, California*

ԷՎԼԱԼԻԱ - EVLALIA
Acrylic on paper, 1996, 56 x 58.5cm.
*Artist's Collection, Irvine, California*





©1997 Alice Navasargian



# ԱՐՄԷՆ ՍԵՒԱԴԱ (ՂԱՐԱԲԷԳԵԱՆ)

1968

# ARMEN SEVADA (GHARABEGIAN)

Սեփական ասելիքի ու ձեռագրի յստակման յամառ որոնումները, որ յատուկ են իրանահայ արուեստագէտների երիտասարդ սերնդին, իրենց արտայայտութիւնն են դրել 1978-ին ԱՄՆ տեղափոխուած Արմէն Սևադայի գործերում։ Նա սովորել է Գլենդէլի բարձրագոյն դպրոցում, ապա չորս տարի յաճախել արուեստի քոլէջ։ Իր մասին նկարիչն ասում է. «Ես պատրաստ եմ սովորել ողջ կեանքում։ Պէտք է նախ սովորել լաւ նկարել։ Աբստրակտ գործն իսկ չի կարող մաքուր լինել առանց հմուտ վարպետութեան։ Արարման ընթացքն է միայն արուեստագէտին պարգևում իսկական բաւարարում»։ Արմէնը խստապահանջ է, բծախնդիր։ Նրա աշխատանքները՝ նկարներ թէ տարբեր նիւթերով արուած քանդակներ, խոր ապրումի արգասիք են։ Ի դէպ, արտաքինը՝ գեղարուեստական լուծմամբ միշտ զուսպ ու անթերի, միջոց է նրա համար, դիտողին հաղորդակից դարձնելու իր փայփայած անհունի, յաւիտենականի եզրեր շօշափող գաղափարներին։

The stubborn search for an individual idiom and the clarification of a text, which is unique to the younger generation of Iranian-Armenian artists, found its expression in the works of Armen Sevada who moved to the United States in 1978. He studied at Glendale College and then attended an art college for four years. The artist says about himself, "I am prepared to study my entire life. It is necessary to study first and then paint. Abstract art cannot be pure without total mastery. It is only while creating that an artist feels true satisfaction." Armen is exacting and very particular. His works, whether painting or sculpting with other materials, are the fruit of his deepest emotions. For him, the external – an artistic solution always restrained and clean – is a means for him to communicate with the viewer the infinity which he caresses, the ideas which reach to the edges of eternity.



ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ
MEMORY
Pastel on paper and steel, 1990, 85 x 41cm.
*M. M. Aroustanian Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



ԱՐԱՀԵՏ

PASSAGE
Oil on wood, 1992, 120 x 13cm.
*Artist's Collection*



ՄՈՒՏՔ

ENTRANCE
Charcoal on paper, 1994, 39 x 26cm.
*Ramin Sanjari Collection, California*



©1997 Alice Navasargian



ՊԱՀԸ #3

THE MOMENT #3
Oil on canvas, 116 x 92cm.
*Paul E. Krofli Collection*



ՊԱՀԸ #7

THE MOMENT #7
Oil on canvas, 1997, 107 x 7cm.
*Elisa Stein Collection*



©1997 Alice Navasargian



ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

UNTITLED
Oil on paper, 1981
*A.S. Gurabegian Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# ՕՇԻՆ ՍԱԳԻՆԵԱՆ

## 1956

# OSHIN SAGINIAN

Արուեստի առաջին դպրոցը Օշինի համար եղել է հօր նկարները, հնագոյն իրերի ու գրքերի հարուստ հաւաքածուն: Սովորել է Թեհրանի Դաւիթեան վարժարանում, իսկ մասնագիտական կրթութիւնն ստացել է Հարաւային Քալիֆորնիայի համալսարանում (1974-81) և Լոս-Անջելըսի «Օթիս» արուեստի քոլէջում (1993-95): 1988-ից սկսած, ամէն տարի, ցուցադրել է իր գործերը:

Սագինեանի ներշնչման աղբիւրը բնութիւնն է: Բոյսերի, հողից հանուած նրանց արմատների տարօրինակ, կծկդանման ոլորտները արուեստագէտին յուշում են ենթագիտակցական ապրումներ: Տեսանելին խթանում է յարափոփող երևակայութիւնը, դառնում ստեղծագործական գործընթացի հէնք: Լուսանկարչական թւացեալ ճշգրտութեամբ վերարտադրուած իրական պատկերները խտացնում են մարդկային հոգեվիճակներ, հաղորդելով ցաւի, մորմոքի, տառապանքի զգացումներ:

The first artistic school for Oshin was the rich collection of paintings, ancient artifacts, and books of his grandfather. He studied at the Tavitian school of Tehran, and received specialized training at the University of Southern California (1974-1981) and in the Los Angeles "Otis" Art College (1993-1995). Since 1988, he has exhibited his works annually.

The source of the artist's inspiration is nature. The tangled roots of plants newly taken out of the ground, remind the artist of the subconscious desires of man. The visible has pushed a constantly changing imagination, becoming the axis of the creative process. The paintings, which remind one of photographs in their accurate portrayal of objects, condense human experience, the psychological state, communicating feelings of pain, anguish, and suffering. Saginian's works are mono-chromatic, where the play of hues and movement compose a dense unity.



ԱՐՄԱՏՆԵՐ #1

ROOTS #1

Monograph on paper, 1995, 23 x 30cm.

*Artist's Collection, Venice, California*



©1997 Alice Navasargian



ԱՐՄԱՏՆԵՐ #2

ROOTS #2
Monograph on paper, 1996, 69 x 175cm.
*Artist's Collection, Venice, California*



ԱՐՄԱՏՆԵՐ #3

ROOTS #3
Monograph on paper, 1996, 65 x 30cm.
*Alice Navasargian Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# ՀՐԱՉ ԴԱՒԹԵԱՆ

1958

# HRATCH DAVTIAN

Արուեստի զարգացումը չի բացառում ազդեցութիւնների դերը։ Դաւթեանի աշխատանքները յիշեցնում են անգլիական յայտնի նկարիչ Ֆ. Բէյկոնին։ Սակայն, Դաւթեանի դիմանկարներում արտայայտչութեան ուժը ոչ թէ շեշտւում է ձևախեղումներով (deformation), այլ իրեն բնորոշ գծանկարի սրութեամբ։ Ի դէպ, նրա կտաւների մակերեսին գիծն ու գոյնը հանդէս են գալիս միաձոյլ, վրձնի ինքնաբուխ, ասես տարերային, խիստ երանդագին քսւածքներով։ Նկարչի գործերում իշխող անհանգիստ, լարուած մթնոլորտը ժամանակակից կեանքի արձագանգն է։

Դաւթեանը ծնւել է Աբադանում, նկարել է սկսել վաղ հասակից։ Պատանի նկարիչների մրցոյթում շահել է առաջին մրցանակ։ Աւարտել է Թեհրանի համալսարանի ճարտարապետական բաժինը, միաժամանակ զբաղւել գրաֆիկայով, ձևաւորել գրքեր։ 1986-ին հաստատւել է ԱՄՆ-ում, շարունակել ուսումը Լոս-Անջելըսի համալսարանի գեղարւեստի դպրոցում։

The development of art does not exclude the role of influences. Tavtian's works reminds one of the famous British artist F. Bacon. Yet, in Tavtian's portraits, the expression of strength is not emphasized by deformation, but with the sharpness of his art. Therefore, the lines and color of the surface of his works are expressed uniformly, with a spontaneous strokes of the brush, with elemental, powerful, colorful strokes. The dominant uncomfortable and tense situation expressed in his work is a reflection of contemporary society.

Tavtian was born in Isfahan, and began painting at an early age. He won first prize at an exhibition of young painters. He graduated from the University of Tehran, architecture school, at the same time occupying himself with graphics. In 1986 he moved to the United States and continued his education in the art school of California State University, Los Angeles.



ՍՈՒՐԲԸ

THE SAINT

Acrylic on canvas, 1995

*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian

ՈՍԿԻ ԱԿԱՆՋՈՎ ՄԱՐԴԸ

THE MAN WITH THE GOLDEN EAR
Acrylic on canvas, 1995, 12 x 9cm
*Artist's Collection, Glendale, California*





ՊԵՂԱՀԱՆՒԱԾ ՄԱՐԴԸ

THE EXCAVATED MAN
Acrylic on canvas, 1995, 10 x 8cm.
*Artist's Collection, Glendale, California*



©1997 Alice Navasargian



# ՎԱՉԷ ՏԷՐ-ՍԱՐԳԻՍԵԱՆ

1956

# VACHE TER-SARGISIAN

Վաչէն ծնւել է Աբադանում և 1971-ին ընտանիքով մեկնել Հայաստան։ Երևանի պոլիտեքնիկ ինստիտուտի ճարտարապետական բաժինը աւարտելէ յետոյ նա նւիրւել է պատմական յուշարձանների վերականգման գործին։

1980-ին տեղափոխւել է Լոս-Անջելըս, զբաղւել նկարչութեամբ, յաջողութեամբ ցուցադրւել տեղի Արդի Արւեստի նկարասրահում։ Նրա գործերի գունագծային կառուցւածքը դիտողին բացում է հարազատ, խոհուն, ազգայինով շնչող արւեստագէտի ներաշխարհը։ Հայկական մանրանկարչութեան ու ճարտարապետութեան աւանդոյթները իւրովի անդրադարձ են գտել նրա արւեստում։ Վաչէի նկարներում, թռչունների պէս կամարների տակ ու պատուհանների բացւածքներում թառած երեխաները, ասես վաղեմի յուշ-կենդանի արձագանք են հնչեցնում։ Նրա գործերի գեղանկարչական գեղեցկութիւնը արդիական դրսևորում ունի։

Born in Abadan and graduated from the Armenian school in New Julfa, Ter-Sargisian moved with his family to Armenia in 1971. The artist, who graduated from the Polytechnic Institute with a degree in architecture, devoted himself to the reconstruction of Armenian historical monuments.

In 1980, he moved to Los Angeles, and became a full-time painter, successfully exhibiting his work in the local Modern Art Hall. The color and line of the structure of works opens to the viewer the real and inner-world of the artist, imbued with national feelings. The traditions of Armenian miniature painting and architecture have found an authentic response in his art. In Vache's work, the children sitting like birds under the arches and the window sills, are a living reflection. For Vache, childhood is a mirror to penetrate the past. His artistic beauty of his work is suggested by the cleanliness of the mirror, which has a modern expression.

ՓՈՂՈՑՈՒՄ #6 - ON THE STREET #6
Mixed media, 1993, 20 x 20cm., *Private Collection, Glendale, California*



ՕՐԲԵԼԵԱՆԸ #2
ORPELIAN #2
Mixed media, 1995, 3 x 4.5cm.
*Private Collection, Beverly Hills, California*



ՅՈՒՇԵՐ

MEMORICON
Mixed media
1990, 18 x 23cm.
*Private Collection*
*Glendale,*
*California*



ՊԱՏՈՒՀԱՆԸ #1

THE WINDOW #1
Mixed media, 13 x 5cm.
*Private Collection, Westwood, California*



ՅՈՒՇԵՐ #1

MEMORIES #1
Mixed media, 1992, 10 x 10cm.
*Private Collection, Glendale, California*





©1997 Alice Navasargian



# ՔԱՐԷՆ ԲԱԲԱՅԵԱՆ

1962

# KAREN BABAYAN

Ք. Բաբայեանը ծնուել է Թեհրանում. Նա մեծացել է խորապէս տպաւորուելով հայկական մանրանկարչութեամբ: Նա զարգացրել է կենդանիների սիմբոլիկ-տեսողական մի բառապաշար, որով լցւում են նրա կտաւները և որի շնորհիւ բացայայտւում են բնութեան դրական և բացասական ուժերը, և ընդգծում մարդկային հակակշռից դուրս գտնուող արտաքին ուժերի ազդեցութիւնը մեր կեանքի վրայ: Սա արուեստագէտի փորձն է տեղադրելու սեփական մշակութային ժառանգութիւնը ընդարձակ աշխարհում:

Հետեւաբար, զարմանալի չէ որ Քարէնի գործերի մէջ գտնում ենք տարբեր իրականութիւնների համակենացութիւն: Ուժեղ նկարումների խորքում կան մշակութային հնագոյն աւանդոյթներից շերտեր, որոնք հաշտեցւում են արդի աշխարհի հետ, այնպէս ինչպէս արուեստագէտը ինքը պիտի գտնի իր անհատականութեանը նպաստող մշակութային տարբեր ուժերի հաւասարակշռման կէտը:

Այժմ Բաբայանը ապրում, գործում է Լոնդոնում:

K. Babayan was born in Tehran. She grew up being greatly influenced by Armenian illuminated manuscripts. She has evolved a visual vocabulary of symbolic animals which fill her paintings. They convey both the positive and negative power of nature and give a sense of the impact on our lives of external forces beyond our control... Ultimately, this is an intensely personal attempt by the artist to locate her cultural inheritance within the wider world.

It comes as no surprise, then, to find the co-existence of different realities in Karen's work. Within the powerful images are resonances of long-established cultural traditions to be reconciled with the modern world, just as the artist has to find a point of balance between the different cultural forces which contribute to her identity.

Presently, she lives and works in London, England.



ԹՐԱՇՈՒՇԱՆ

BEARDED IRIS

Oil on canvas, 210 x 210cm.

*Private Collection, London, England*



©1997 Alice Navasargian



ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԵԱՆ ԿԷՏԸ

THE POINT OF BALANCE
Oil on canvas, 183 x 122cm.
*Private Collection, London, England*



©1997 Alice Navasargian



ՀԱՐՍԱՆԻՔ
WEDDING
Gouache and watercolor on paper, 145 x 206cm.



ՎԻՇՏ
GRIEF
Gouache on paper
75 x 22cm.
*Private Collection*
*London, England*



©1997 Alice Navasargian



ՀԶՕՐ ԿԱՆԱՅՔ

POWERFUL WOMEN
Gouache on paper, 183 x 122cm.
*Private Collection, London, England*



©1997 Alice Navasargian

ԱԼԻՍ ՆԱՎԱՍԱՐԳԵԱՆ

# ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

*Ոսկի Կամուրջներ*

20-ՐԴ ԴԱՐԻ ԻՐԱՆԱՀԱՅ ԱՐԻԵՍՏԱԳԷՏՆԵՐ

**Պատմական ակնարկ**....................11
**Իրանահայ դասական նկարիչներ**....43
**Իրանահայ արդի նկարիչներ**.........111

էջ **42**
Դարվիշ. Օմար Խայեամի պատկերաշարից
էջ **110**
Մարքո Գրիգորեան. Կաւանկարչութիւն

ALICE NAVASARGIAN

# IRAN-ARMENIA

*Golden Bridges*

XX-TH CENTURY IRANIAN-ARMENIAN ARTISTS

**Historical view**..................................11
**Iranian-Armenian Classical Painters**...43
**Iranian-Armenian Modern Painters**..111

*Page 42*
Darwish. Omar Khayiam series (Detail)
*Page 110*
Marco Grigorian. Earthwork (Detail)

Printed in Canada 1997
AAA Publishing House

©1997 Alice Navasargian

# ALICE NAVASARGIAN
# ԱԼԻՍ ՆԱՒԱՍԱՐԳԵԱՆ



